ՀՏԴ 338.1:658.5

Ջ.Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման, ներառականության և կայուն զարգացման ապահովման կարևորագույն գործոններից է: Վերջին տարիներին ձեռնարկատիրության արժեհամակարգը, չնայած որոշ ազդեցություններին, շարունակում է, ի դեմս ՓՄՁ-երի, լուրջ դերակատարություն ունենալ երկրի տնտեսական կյանքում: Ուստի և ՓՄՁ ոլորտում հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումների փաթեթը ոչ միայն կնպաստեն երկրի տնտեսական աճին, այլ նաև սոցիալական ոլորտի հետ կապված որոշ խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ գործազրկության մեղմմանը, աղքատության մակարդակի նվազեցմանը, նոր աշխատատեղերի առաջարկին և այլն:

Առանցքային բառեր. գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններ, ձեռնարկատիրական արժեհամակարգ, ՀՆԱ:

Ներածություն. Համաշխարհային տնտեսության առաջընթացի ապահովման գործում վերջին մի քանի տասնամյակում էական դերակատարում ունեցավ և շարունակում է ունենալ երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնասյուներից մեկը՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Վերջինս նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, եկամուտների անհամաչափ բաշխման հիմնախնդրի լուծմանը, ավելին, իր ճկունությամբ՝ նաև նորարարական մտքի արագ տարածմանը: Ժամանակակից պայմաններում ոչ պակաս կարևոր է ՓՄՁ-ի ներգրավումը գլոբալ արժեստեղծման շղթաներում և ամենակարևորը՝ տնտեսության ներառականության ապահովման տիրույթում: ՓՄՁ ազգային տնտեսության մեջ հիմնական ներդրողն է, առկա ռեսուրսների անմիջական օգտագործողը և զբաղվածություն ապահովողը:

Թեմայի արդիականությունը և հետազոտության նպատակը. Հետազոտությունն արդիական է նրանով, որ աշխարհում դեռևս մոլեգնում է համավարակը, կանխատեսվում են լավատեսական և վատատեսական բազմաթիվ դիպաշարեր, դեռևս իշխում են անորոշությունն ու ռիսկերը՝ պայմանավորված նաև ռուս-ուկրաինական պատերազմով: Նման իրողություններում ներգրավված է նաև Հայաստանը, ուստի և գործարար դաշտին առնչվող հարցադրումների ուսումնասիրությունը և՛ արդիական է, և՛ հրատապ: Մեր կողմից՝ կատարված հետազոտության հիմնական նպատակը ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներով պայմանավորված ռիսկերի բացահայտումն է ՓՄՁ ոլորտում

և տնտեսության վերականգնմանն ու սոցիալական արդարության ապահովմանը միտված առաջարկությունների փաթեթի ներկայացումը:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Հետազոտության շրջանակներում խնդիր է դրված ուսումնասիրել ՀՀ ՓՄՁ ոլորտը, հատկապես COVID-19 համավարակի տնտեսական ազդեցությունների տիրույթում, բացահայտել ՓՄՁ ոլորտում առկա հիմնախնդիրները և ներկայացնել ՓՄՁ ոլորտի հետագա զարգացումներին միտված հնարավորությունները: Վերջինս կարող է խիստ կառուցողական և արդյունավետ լինել ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հետագա տնտեսական քաղաքականության մշակման գործընթացներում:

Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանյան տնտեսագետների՝ հետազոտվող թեմային նվիրված գիտական հրապարակումներն ու աշխատությունները, ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի, միջազգային կազմակերպությունների և պաշտոնական վիճակագրական այլ հրապարակումներ: Հետազոտության մեջ կիրառվել են վիճակագրական վերլուծության տարբեր մեթոդներ: Ոչ պակաս կարևոր փաստաթուղթ է նաև ձեռնարկատիրության համաշխարհային զեկույցը [1], որի շրջանակներում 2019թ. ընդգրկվել է նաև Հայաստանը:

Հետազոտության արդյունքները. ՓՄՁ-ն Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման, ներառականության և կայուն զարգացման ապահովման կարևորագույն գործոններից է: ՀՀ Կառավարության 2019թ. ծրագրում մեծապես կարևորվեց ՓՄՁ զարգացումը, որը համարվում է ներառական տնտեսական աճի նախադրյալ [2]:

ՓՄՁ-ն էական դերակատարում ունի ՀՀ տնտեսության մեջ: Այսպես, 2020թ. ՓՄՁ ոլորտի համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում կազմել է 27,7%՝ [3] 2019թ. [4] նույն ցուցանիշը գերազանցելով 1,7%-ով, ընդ որում, առաջին հորիզոնականում մեծածախ և մանրածախ առևտուրն է, երկրորդում՝ մշակող արդյունաբերությունը, 2020թ.՝ 9,0% և 6,3% մասնաբաժիններով և 2019թ. համապատասխանաբար՝ 9% և 5,4% (*հաշվարկները կատարված են հեղինակի կողմից*):

Այս խորապատկերին դիտարկենք ՓՄՁ տնտեսավարողների տնտեսական գործունեությունն արտացոլող մի շարք ցուցանիշների փոփոխությունները՝ 2018-2020թթ. և արձանագրենք որոշ միտումներ: 2020թ. ընթացքում ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների ընդհանուր քանակից (83.164 միավոր) 83.032 միավորը [3] կազմել են ՓՄՁ տնտեսավարողները կամ 2020թ. ընթացքում՝ ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրակա-

նացրած տնտեսավարողների ավելի քան 99,8 %-ը: 2019թ. համեմատ 2020թ. նրանց թվաքանակն աճել է մոտավորապես 11%-ով, իսկ 2018թ. համեմատ՝ մոտավորապես 21%-ով [3 - 5]: Ավելորդ չենք համարում նշել, որ 2019թ. համեմատ 2020թ. տնտեսավարողների քանակն ավելացել է ՓՄՁ ոլորտում 7984 միավորով: Նշենք նաև, որ ՓՄՁ ընդամենը տնտեսավարողների մոտավորապես 95%-ը կազմել են գերփոքր կազմակերպությունները (նկ.1):



Նկ. 1. ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած ընդամենը և գերփոքր տնտեսավարողների քանակական նկարագիրը (2018-2020թթ.) [4]

Ավելին, 2020թ. գերփոքր տնտեսավարողների թիվն ավելացել է 8500 միավորով, բնականաբար, ի հաշիվ փոքր, միջին և խոշոր տնտեսավարողների ընդհանուր քանակի նվազման (նկ.2):



Նկ. 2. ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած փոքր, միջին և խոշոր տնտեսավարողների քանակական նկարագիրը (2018-2020թթ.) [3]

Նկ. 2-ում տեսնում ենք, որ 2020թ. փոքր կազմակերպությունների թվաքանակը 2019թ. համեմատ նվազել է 465 միավորով, իսկ միջին կազմակերպությունների թվաքանակը նվազել է 148 միավորով: Նախորդ տարվա համեմատ խոշոր տնտեսավարողների թիվը 2020թ. կրճատվել է 3 միավորով, բնականաբար,

պայմանավորված համավարակի ազդեցությամբ, գլոբալ պահանջարկի նվազմամբ, գլոբալ մատակարարման շղթաների փլուզմամբ: 2018թ. համեմատ, ինչպես արդեն նշեցինք, խոշոր տնտեսավարողների թվաքանակը կրճատվել է 32 միավորով: 2021թ. վիճակագրությունը դիտարկելիս նկատում ենք ՓՄՁ տնտեսավարողների ընդհանուր թվաքանակի շարունակվող նվազում նախորդ տարվա համեմատ՝ մոտավորապես 68%-ով: Համավարակին հաջորդող տարում կազմակերպությունների ընդհանուր թվաքանակը նվազել է 26.311 միավորով: Բնականաբար, նվազել է ՓՄՁ-ում զգալի մասնաբաժին կազմող գերփոքր կազմակերպությունների թիվը՝ մոտավորապես 31.671 միավորով կամ 60%-ով [6]:

Անշուշտ, գործող կազմակերպությունների թվի նման նվազումը պայմանավորված է համավարակի դեռևս շարունակվող ազդեցություններով, Կառավարության կողմից համավարակի ազդեցությունների չեզոքացմանն ուղղված միջոցառումների թիրախային պասսիվությամբ հատկապես գերփոքր տնտեսավարողների նկատմամբ:

Սակայն ընդգծենք այն հանգամանքը, որ չնայած վերոնշյալ իրավիճակին՝ 2018-2020թթ. ընթացքում գործարար դաշտն ակտիվացել է ընդհանուր տնտեսավարողների քանակով (14384 միավոր), որից գերփոքր կազմակերպությունների քանակը նույն ժամանակահատվածում ավելացել է 14.186 միավորով կամ ավելի քան 99%-ով: 2018թ. համեմատությամբ 2020թ. 121 միավորով ավելացել են փոքր և 71 միավորով՝ միջին կազմակերպությունները, մինչդեռ նույն ժամանակահատվածում, ինչպես արդեն նշեցինք, 32 միավորով նվազել է խոշոր կազմակերպությունների քանակը:

Այսպիսով, մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածում նկատելի է տնտեսավարողների թվաքանակի աճ գործարար դաշտում, ինչը վկայում է բիզնեսի նկատմամբ հետաքրքրության և վստահության ակտիվացման մասին: Ընդ որում, դա հիմնականում տեղի է ունեցել ՓՄՁ-ի հաշվին: Գործարար միջավայրի աշխուժացման տիրույթում չենք բացառում նաև ՀՀ Կառավարության կողմից իրականացված իրավիճակային տնտեսական քաղաքականության ազդեցությունները, ստվերի կրճատմանը միտված գործողությունները, կոռուպցիոն սխեմաների նվազումը:

Ուշագրավ են նաև ուսումնասիրվող ժամանակահատվածում տնտեսավարողների տարբեր խմբերի կողմից թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների ծավալների փոփոխությունները [3-5]: Այսպես, ուսումնասիրվող ժամանակահատվածում թողարկված արտադրանքի ծավալներն աճել են՝ 2019թ. 5486.2 մլն դրամով, 2018թ. համեմատ դրանց ծավալները նվազել են, 2020թ.՝ նախորդ՝ 2019թ. համեմատությամբ՝ 6002.7 մլն դրամով (նկ.3): Ընդ

որում, փաստենք, որ 2018թ. համեմատությամբ 516.473.9 մլն դրամով տնտեսավարողների կողմից թողարկված ապրանքների և մատուցված ծառայությունների ծավալներն աճել են 2020թ.: Ուսումնասիրությունն ավելորդ չծանրաբեռնելու նպատակով արձանագրենք, որ հետազոտվող ժամանակահատվածում տնտեսավարողների տարբեր խմբերում (գերփոքր, փոքր, միջին, խոշոր) նկատելի են նույն միտումները, հատկապես նշենք այն փաստը, որ երեք տարիների ընթացքում գերփոքր տնտեսավարողների կողմից իրականացված շրջանառության ծավալներում նկատելի է շարունակական աճ: ՓՄՁ մասնաբաժինն արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում 2018-2020թթ. համապատասխանաբար կազմել է 63,3%, 62,3%, 64,9% (նկ.3): Նշենք նաև, որ այս ժամանակահատվածում խոշոր տնտեսավարողների մասնաբաժինն արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների շրջանառության մեջ համապատասխանաբար կազմել է 36,7%, 37.7%, 35,1% (*հաշվարկները կատարված են հեղինակի կողմից*):



Նկ. 3. ՓՄՁ և խոշոր տնտեսավարողների մասնաբաժինը 2018-2020թթ. [3-5] *ընթացքում արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների ծավալների ընդամենը շրջանառության մեջ*

Ուսումնասիրվող տարիներին ՀՀ մակրոտնտեսական իրավիճակն ու ՀՀ Կառավարության տնտեսական քաղաքականությունն իրենց ազդեցությունը չէին կարող չունենալ ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների վարձու աշխատողների թվաքանակի դինամիկայի վրա (նկ.4): ՀՀ ՎԿ-ի հրապարակման մեջ ներկայացված վիճակագրությունը փաստում է, որ հետազոտվող տարիներին ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների ընդամենը վարձու աշխատողների թվաքանակը 2019թ. աճել է 286. 649 մարդով կամ 5 անգամ՝ 2018թ. համեմատությամբ: Ինչ խոսք, երևույթը կապված է բազմաթիվ հիմնարար միջոցառումների հետ, մասնավորապես՝ ձեռնարկատիրական արժեհամակարգի տիրույթում այնպիսի դրական ազդակների ներարկման հետ, ինչպիսիք են վստահությունը ձեռնարկատիրական

գործունեությամբ զբաղվելու նկատմամբ, շուկայական ազատությունները, օրենսդրական բարեփոխումները, ստվերի կրճատումը և այլն: Սակայն կորոնավիրուսի ազդեցությամբ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացման արդյունքում 2020թ. ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների վարձու աշխատողների քանակը կրճատվել է 16. 431 մարդով 2019թ. համեմատ: Ինչ վերաբերում է նույն տարիներին ՓՄՁ տնտեսավարողների ընդամենը վարձու աշխատողների թվաքանակին, ապա փաստենք, որ 2019թ. նրանց քանակը 2018թ. նույնպես ավելացել է 179. 415 մարդով կամ 4 անգամ, մինչդեռ 2020թ. ՓՄՁ տնտեսավարողների ընդամենը վարձու աշխատողների քանակը 2019թ. համեմատ կրճատվել է 15. 114 մարդով: Համավարակն իր գործն արել է, պատճառների մասին արդեն նշեցինք:



Նկ. 4. ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների վարձու աշխատողների թվաքանակը (մարդ) [3-5]

Այսուհանդերձ, ՀՀ տնտեսության մեջ 2018-2020թթ. գործարար դաշտը պահպանել է իր վերընթաց դրսևորումները, հիմնականում տնտեսավարողների ընդհանուր թվաքանակը ցուցաբերել է աճի միտումներ: Արձանագրված է մեկ ուշագրավ իրողություն ևս, այն է՝ նույն ժամանակահատվածում ՓՄՁ տնտեսավարողների վարձու աշխատողների թվաքանակում տարեցտարի նվազել է գերփոքր տնտեսավարողների վարձու աշխատողների թվաքանակը, ընդ որում, «Մեծածախ և մանրածախ առևտուր, մեքենաների և մոտոցիկլների նորոգում» բաժնում: 2018թ. 42. 940 մարդ է աշխատել գերփոքր կազմակերպություններում, 2019թ. նրանց թվաքանակը կրճատվել է 269 մարդով, և 2020թ. շարունակվել են կրճատումներն ու կազմել 3732 մարդ: Երևույթը վկայում է գերփոքր տնտեսավարողների մրցունակության ցածր մակարդակի կամ դրա իսպառ բացակայության մասին, ոչ նորարարական ձեռնարկատիրության կարողություններին տիրապետելու

հմտությունների և վերջապես առևտրի խոշոր ցանցերի ստեղծման մասին: Կարևոր ենք համարում ընդգծել, որ համաձայն ՀՀ-ում վարձու աշխատողների թվաքանակն ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) բաժինների և տնտեսավարողների չափերի՝ ՀՀ ՎԿ ներկայացված վիճակագրության՝ հիմնականում վարձու աշխատողների քանակն ավելացել է փոքր և միջին կազմակերպություններում՝ «Տեղեկատվություն և կապ» բաժնում, իսկ «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում [3-5] դրանց թվաքանակն ավելացել է խոշոր կազմակերպություններում: Նորարարական ձեռնարկատիրության, բիզնես ծառայություններին ներկայացվող ժամանակակից պահանջները, բնականաբար, կարող են «պարտադրել» նման զարգացումներ:

ՓՄՁ գործունեության արդյունավետության և զարգացման ռազմավարության վերաբերյալ առավել իրատեսական պատկերացում ենք ստանում, երբ վերլուծում ենք նոր տնտեսավարողների քանակային և ոլորտային պատկանելության վերաբերող այնպիսի տեղեկատվություն, որը ներկայացնում է համապատասխան տարիներին ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների բիզնես-ժողովրդագրական նկարագիրը: Ինչպես վկայում է պաշտոնական վիճակագրությունը [3-5], ՓՄՁ-ներում այս հարթության մեջ դրսևորվել է նույն վարքագիծը: COVID-19 համավարակին նախորդող տարում նոր ստեղծված տնտեսավարողների քանակն ավելացել է 866 միավորով: Սակայն 2020թ. նախորդ տարվա համեմատ նկատվել է նվազման միտում. դրանց թիվը պակասել է 179 միավորով: Սակայն ընդհանուր առմամբ ուսումնասիրվող ժամա-նակահատվածում ՓՄՁ-ներում դրսևորվել է վերընթաց զարգացում, և 2018թ. համեմատությամբ 2020թ. նոր ստեղծված կազմակերպությունների քանակն աճել է 687 միավորով: Այս դեպքում ևս միայն 2020թ. դրանց գերակշիռ մասը ստեղծվել է որպես գերփոքր կազմակերպություն՝ 11402 միավորով և գերազանցապես Երևան քաղաքում: Նոր ձևավորված տնտեսավարողների ընդհանուր քանակի մոտավորապես 52%-ն է ներկայացված մայրաքաղաքում, որի 99%-ը գերփոքր կազմակերպություն է: 2020թ. ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ, խմբ. 2)՝ նոր ստեղծված տնտեսավարողների քանակով առաջին հորիզոնականում «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» բաժինն է՝ 6133 միավոր, որը կազմում է ընդամենը նոր ստեղծվածների 53%-ը: Երկրորդ հորիզոնականում «Մշակող արդյունաբերություն»-ն է՝ 1592 միավոր կամ ընդհանուրի 14%-ը: Երրորդ հորիզոնականում «Կացության և հանրային սննդի կազմակերպում»-ը՝ 871 միավոր կամ ընդհանուր նոր ստեղծվածների 7,6%-ը: 2019թ. նոր ստեղծված կազմակերպություններում գրանցվել է աճի միտում, Թվաքանակը 2019թ. 2018թ. համեմատությամբ

ավելացել է 866 միավորով: 2019թ. ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2)՝ նոր ստեղծված տնտեսավարողների քանակով առաջին հորիզոնականում «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» բաժինն է՝ 6939 միավոր, որը կազմում է ընդամենը նոր ստեղծվածների 60%-ը: Երկրորդ հորիզոնականում «Կացության և հանրային սննդի կազմակերպում» բաժինն է՝ 1120 միավոր կամ ընդհանուրի 9,7%-ը: Երրորդ հորիզոնականում «Մշակող արդյունաբերությունն» է՝ 1027 միավոր կամ ընդհանուր նոր ստեղծվածների 8,8%-ը: Փաստորեն համավարակի ազդեցություններն առավել ցցուն ներկայացվում են այս երեք բաժիններում, որտեղ նկատելի են 2019թ. համեմատ 2020թ. ցուցանիշների էական նվազում՝ բացառությամբ «Մշակող արդյունաբերություն» բաժնի. այստեղ գրանցվել է 5,2% աճ: Մասնավորապես, էական անկում է գրանցվել, մոտավորապես 7%, «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» բաժնում և 2,1% անկում՝ «Կացության և հանրային սննդի կազմակերպում» բաժնում: Փոփոխությունների դինամիկան 2020թ. նույնն է 2018թ. համեմատությամբ:

ՓՄՁ զարգացման որակական ցուցանիշ է նաև դրանց լուծարմանը վերաբերող վիճակագրությունը [3-5]: Կարծում ենք՝ համավարակի ազդեցության ամենացայտուն վարքագծի մասին է վկայում այս ցուցանիշը: Այսպես, ուսումնասիրվող ժամանակահատվածում նկատում ենք գործունեությունը դադարեցրած տնտեսավարողների ամենամեծ քանակը 2020թ., ընդ որում, գերփոքր կազմակերպությունների շրջանակում: Գործունեությունը դադարեցրել են 8836 գերփոքր տնտեսավարողներ, որոնց մասնաբաժինը գործունեությունը դադարեցրած տնտեսավարողների ընդհանուր քանակում կազմել է 99%: Վերջիններիս կազմում հիմնականում լուծարվել են վարձու աշխատող չունեցող տնտեսավարողները (գերփոքր տնտեսավարողների ընդհանուր քանակի 59%-ը): Գերփոքր տնտեսավարողներն առավել կայուն գործունեություն են իրականացրել 2019թ., ընդհանուր «մահացած» կազմակերպությունների ընդամենը 10%-ն են կազմել գերփոքրերը: 2020թ. ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2)՝ առաջին հորիզոնականում «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» բաժինն է՝ 6123 միավոր, որը կազմում է ընդամենը լուծարվածների 68%-ը: Թվաքանակը 2019թ. համեմատությամբ ավելացել է 1369 միավորով: Նույն բաժնում 2018թ. ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ լուծարվածների 69%-ն են կազմել գերփոքր կազմակերպությունները, իսկ 2019թ. ընդհանուրի մեջ դրանց մասնաբաժինը կազմել է 70%:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակահատվածում անչափ մտահոգիչ է և՛ նոր ստեղծված, և՛ լուծարված տնտեսավարողների քանակների համեմատու-

թյունը: Բանն այն է, որ երևույթը նույնիսկ զավեշտալի է այն առումով, որ ինչ արագությամբ ստեղծվում են ՓՄՁ կազմակերպություններ, գրեթե նույն արագությամբ էլ «մահանում» են (նկ.5): Անշուշտ, սա վկայում է ՓՄՁ զարգացման ոչ կայուն, միայն կարճաժամկետ սոցիալական խնդիրների լուծմանը միտված տնտեսական գործունեության մասին: Այսպես, երբ համեմատում ենք տարբեր տարիներին նոր ստեղծված տնտեսավարողների քանակը, ապա դրական պետք է գնահատել գործարար դաշտի ակտիվացումը, իհարկե, գերփոքր կազմակերպությունների հաշվին: Միայն 2020թ. նախորդ տարվա համեմատությամբ լուծարված կազմակերպությունների քանակն ավելացել է 2173 միավորով: Դրանց կրճատման միտումը պահպանվել է նաև 2018թ. համեմատ, դրանք 2020թ. ավելացել են 987 միավորով: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, տնտեսության երկարաժամկետ զարգացումների առումով ՀՀ տնտեսավարողների նման ծավալային սնանկացումները կարող են պարունակել լուրջ ռիսկեր՝ տնտեսական աճի ապահովման, երկրի մրցունակության, աղքատության մակարդակի խորացման և այլ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների տիրույթում: Այն հանգամանքը, որ ՓՄՁ ոլորտում ընդգրկված կազմակերպությունների ընդհանուր թվում մեծ մասնաբաժին ունեն առևտրի ոլորտի ձեռնարկությունները, այսինքն մեծածախ և մանրածախ ոլորտում ընդգրկված գերփոքր կազմակերպությունները, կնշանակի՝ ակնհայտ են այն կորուստները, որոնք կրեցին նշյալ տնտեսավարողները հարկադիր պարապուրդների և մեկուսացման պայմաններում: Ավելին, եթե արձանագրենք նաև այն փաստը, որ նման տնտեսավարողների գործունեությունը հիմնականում միտված է սոցիալական խնդիրների լուծմանը, գործարարությամբ զբաղվելու մարդկանց շարժառիթն ընտանիքի սոցիալական կարիքների բավարարումն է, ուստի և ակնհայտ է համակարգի չգեներացման փաստը:



Նկ. 5. Նոր ստեղծված և գործունեությունը դադարեցրած/լուծարված (մահացած) տնտեսավարողների ընդհանուր քանակը (միավոր), 2018-2020թթ. [3-5]

Երևույթի սոսկ հպանցիկ դիտարկումն արդեն իսկ բավականաչափ խոսուն է բացասական ազդեցությունների տեսանկյունից: Այս ուսումնասիրությունների շրջանակում առանձնակի ուշադրություն ենք հատկացրել ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2)՝ բիզնես ծառայությունների հետ կապված բաժիններում տնտեսավարողների քանակական փոփոխություններին: Բանն այն է, որ համաշխարհային տնտեսության մեջ արդեն իսկ հաջողությամբ է ծավալվել մի երևույթ, այն է՝ արդյունաբերական չորրորդ հեղափոխությունը, որը նոր մասնագիտությունների նկատմամբ օրեցօր աճող պահանջարկ է դրսևորում: Ուսումնասիրել ենք «Տեղեկատվություն և կապ», «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն», «Սպասարկման ծառայություններ՝ S95 համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում» բաժիններում տնտեսավարողների քանակի փոփոխությունները և հանգել այն եզրակացության, որ ուսումնասիրվող տարիներին տնտեսավարողների ընդհանուր քանակում վերոնշյալ երեք բաժիններն ունեցել են ներքոնշյալ պատկերը: Նկատում ենք, որ «Տեղեկատվություն և կապ» բաժնում 2020թ. գրանցվել է տնտեսավարողների քանակի աճ 2018թ. համեմատ՝ 0,2%-ով, «Սպասարկման ծառայություններ՝ S95 համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում» բաժնում՝ 5,7% աճ, իսկ «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում՝ 0,3% աճ: Կնշանակի՝ բիզնես ծառայությունների ոլորտում վերջին երեք տարիներին տնտեսավարողների քանակն ավելացել է 12,2%-ով *(հաշվարկները կատարված են հեղինակի կողմից):*

Ընդհանուր առմամբ նշված երեք բաժիններում 2018թ. համեմատ տնտեսավարողների քանակը 2020թ. ավելացել է 7503 միավորով, իսկ 2019թ. համեմատ՝ 1302 միավորով, այսինքն մոտավորապես 6 անգամ ավելի պակաս: 2018թ.-ից հետո ոլորտային այս բուռն աճը հիմնականում պայմանավորված է համամասնական եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխությամբ, դրանց աստիճանաբար նվազեցմամբ, ստվերի կրճատմամբ և ամենակարևորը՝ նմանատիպ ծառայությունների մատուցման նկատմամբ պահանջարկի աշխուժացմամբ: Գաղտնիք չէ, որ կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետությունն արտահայտվում է մի այնպիսի ամփոփ ցուցանիշում, ինչպիսին համախառն ավելացված արժեքի մասնաբաժինն է ՀՆԱ-ում՝ ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի, առավել խոշոր խմբերի ու տնտեսավարողների չափերի: Այս տիրույթում, փաստենք, որ ընդամենը (նկ.6) 2020թ. նշյալ տնտեսավարողների մասնաբաժինը տոկոսներով ՀՆԱ-ի համեմատ առավել բարձր ցուցանիշ է գրանցել արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա խմբում (B,C,D,E՝ 18,6%): Երկրորդ հորիզոնա-

կանում առևտուրն է (G)՝ 9,8%, երրորդում ծառայություններն են (H,I,J,L,M,N,S95)՝ 9.1%: 2019թ. համեմատ այս ցուցանիշները դրսևորել են էական փոփոխություններ, մասնավորապես՝ նվազել է ծառայությունների մասնաբաժինը՝ 2%-ով, և 3,1%-ով ավելացել է արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա խմբի մասնաբաժինը: Վերջինս աչքի է ընկնում համավարակով պայմանավորված հումքային ռեսուրսների համաշխարհային գների կտրուկ անկմամբ, սակայն տարեվերջին արդեն դրանց նկատմամբ պահանջարկի մասնակի վերականգնմամբ և, բնականաբար, գների աճով: 0,2%-ով նվազել է առևտրի մասնաբաժինը, ավելացել է նաև շինարարության մասնաբաժինը՝ 0,8%-ով: Հատկապես ծառայությունների խմբում նշյալ վիճակագրությունը խիստ ակնհայտորեն փաստում է համավարակով պայմանավորված տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ փոխադրումների և պահեստային տնտեսությունների, անշարժ գույքի, կացության և հանրային սննդի, վարչարարական և օժանդակ գործունեության հետ կապված գործունեություններում (-2%), ինչն էլ իր արտահայտությունն է գտել մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշում, ինչպիսին ՀՆԱ-ն է:



Նկ. 6. Համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի առավել խոշոր խմբերի ու տնտեսավարողների չափերի, 2019-2020թթ., %-ով ՀՆԱ-ի համեմատ [3. 4]

Արձանագրենք, նաև որ ՓՄՁ ոլորտում ևս (նկ.7) 2020թ. տեղի են ունեցել փոփոխություններ, մասնավորապես համախառն ավելացված արժեքի մասնաբաժինն ամենաշատն ունեցել է առևտուր խումբը՝ 9,0%, որը նույնն է եղել նաև 2019թ.: ՓՄՁ ոլորտի համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ում ավելացել է արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա խմբում՝ 0,9%-ով, շինարարության մասնաբաժնում՝ 0,5%-ով, և ծառայությունների խմբում օրինաչափորեն գրանցվել է անկում՝ -1,1%: Ընդամենը ՓՄՁ համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ում, ըստ ՏԳՍԴ խմբ. 2-ի, 2020թ. ավելացել է 0,3%-ով, ինչը, կարծում ենք, պայմանավորված է «Տեղեկատվություն և կապ» խմբում, մասամբ

նաև առևտրում որոշակի արժեք ստեղծելու հնարավորությամբ: Այսպիսով, ՓՄՁ տնտեսավարողների կողմից արտադրված համախառն ավելացված արժեքի նվազ մասնաբաժնի պատճառը ՀՆԱ-ում այն է, որ ՀՀ-ում չեն իրականացվում երկարաժամկետ բիզնես նախագծեր ՓՄՁ տիրույթում: ՓՄՁ-ն հիմնականում միտված է կարճաժամկետ և բացառապես սոցիալական խնդիրների լուծմանը, գրագետ չէ բիզնես վարքագիծը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ձևախեղված է ձեռնարկատիրության արժեհամակարգը:



Նկ. 7. Համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի, ընդամենն ըստ ՓՄՁ տնտեսավարողների 2019-2020թթ., %-ով ՀՆԱ-ի համեմատ [3, 4]

COVID-19 համավարակի ազդեցությունները դեռևս երկար ժամանակ իրենց զգացնել կտան: Բավական է նշել, որ որ 2021թ. ՓՄՁ տնտեսավարողների քանակը կրճատվել է 68%-ով, իսկ գերփոքր տնտեսավարողներինը՝ 60%-ով: Ուստիև ՓՄՁ վերականգնման և հետագա զարգացման հնարավորությունների բացահայտումը և խնդրի լուծման առաջարկությունների ներկայացումը խիստ այժմեական են:

ՓՄՁ ոլորտի վերականգնման և հետագա զարգացման հնարավորությունները. Կատարված ուսումնասիրության շրջանակներում կարող ենք արձանագրել այն իրողությունը, որ վերջին տարիներին ձեռնարկատիրության արժեհամակարգը, չնայած որոշ ազդեցություններին, շարունակում է, ի դեմս ՓՄՁ-ի, լուրջ դերակատարում ունենալ երկրի տնտեսական կյանքում, ընդ որում, այն ձեռնարկատիրությունը, որտեղ զբաղված է ընդամենը 0-9 մարդ: Սակայն մտահոգիչն այն է, որ գերփոքր կազմակերպությունները չեն վերածվում փոքրերի, փոքրերը՝ միջինի, միջինն էլ՝ խոշորի: Այս իրողության շրջանակներում, կարծում ենք, անչափ կարևորվում է պետություն-մասնավոր հատված երկարաժամկետ ծրագրերի իրականացումը: Վերջին տարիներին, թերևս, հիմնարար տնտեսական փաստն այն է, որ արագացել է փլուզման ու անկայունությունների շղթան ոչ միայն համաշխարհային տնտեսության մեջ, այլ նաև Հայաստանում: Է՛լ ավելի է խորացել

քրոնիկ տնտեսական բևեռացումը: Համավարակն էապես հարվածեց ՓՄՁ ոլորտին, մասնավորապես՝ մանրածախ և մեծածախ առևտրի, կացության և հանրային սննդի կազմակերպման, շինարարության, զբոսաշրջության, տրանսպորտի ոլորտներին: Ի հայտ եկան ՓՄՁ ոլորտում ֆինանսների սղության, մասնագիտական կարողությունների անբավարարության, նոր մասնագիտություններին արագ չարձագանքելու, ինչպես նաև ձեռնարկատիրական ժամանակակից մշակույթի տարրերին անհաղորդ կեցվածքի, բիզնես գիտելիքների և տեղեկատվության բացակայության դրսևորումներ: Վերջիններս ՓՄՁ ոլորտում ձևավորեցին գործունեության միջավայրի ոչ լիարժեքության հետ կապված հիմնախնդիրներ: Ձեռնարկատիրական արժեհամակարգը ենթարկվեց էական ցնցումների, հատկապես ՓՄՁ տնտեսավարողների տիրույթում: Հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանում 2018-2020թթ. ՓՄՁ-ի ճյուղային կառուցվածքը կենտրոնացած է 3 հիմնական ոլորտներում՝

- մեծածախ և մանրածախ առևտուր,
- մշակովի արդյունաբերություն,
- կացության և հանգստի կազմակերպում:

Եզրահանգումն այս պարագայում մեկն է, ձեռնարկատիրական գործունեության հիմնական ոլորտները Հայաստանի մրցակցային ներուժի գեներացման տեսանկյունից գրեթե խոստումնալից չեն՝ թերևս բացառելով մշակող արդյունաբերությունը: Սակայն վերջինիս մասնաբաժինը ՓՄՁ տիրույթում էական չէ, ավելին, եթե նկատի ունենանք այն փաստը, որ ընդհանրապես ՀՀ-ում խիստ ցածր է աշխատանքի արտադրողականությունը [2]: Եվ եթե կարևորենք այն հանգամանքը, որ Հայաստանում ՓՄՁ-ն կենտրոնացած է հատկապես գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում, ապա այսօր գործարար դաշտում ստեղծված իրավիճակը միանգամայն ***«արդարացված է»***:

Եզրակացություն. Այսպիսով, մեր կողմից կատարված հետազոտության շրջանակներում հանգում ենք նախ՝ այն ***եզրակացության***, որ.***ՓՄՁ ոլորտը հայաստանյան տնտեսական իրականության մեջ կատարում է որոշիչ դեր:*** Այդ են վկայում.

✓ ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած ՓՄՁ տնտեսավարողների քանակական աճող փոփոխությունները,

✓ Երևանում ՓՄՁ կենտրոնացվածության բարձր մակարդակը,

✓ ՀՀ տնտեսության մեջ տնտեսավարողների տարբեր խմբերի կողմից թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների ծավալների փոփոխությունների դրական դինամիկան՝ ՓՄՁ ակտիվ դերակատարմամբ,

✓ ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների բիզնես-ժողովրդագրական տիրույթում նոր ստեղծված տնտեսավարողների քանակի աճող փոփոխությունները,

✓ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2)՝ բիզնես ծառայությունների հետ կապված «Մշակող արդյունաբերություն» բաժնում ՓՄՁ տնտեսավարողների զգալի մասնաբաժինը,

✓ ՀՀ ՀՆԱ-ում համախառն ավելացված արժեքի գրեթե 1/3 մասնաբաժինն ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ. 2) ՓՄՁ-ն է, հատկապես «Տեղեկատվություն և կապ», «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն», «Սպասարկման ծառայություններ՝ S95 համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում», «Մշակող արդյունաբերություն» բաժիններում:

Վերոնշյալ բաժիններում ՓՄՁ տնտեսավարողների քանակի ավելացումը և դրանց արտադրած ապրանքների և մատուցած ծառայությունների ծավալների ավելացումը հակված չենք համարելու տնտեսական առաջընթացի կայուն և երկարաժամկետ գրավական: Սակայն, մեր այլ հետազոտողների կողմից բարձրաձայնված հիմնախնդիրների լուծմանը միտված ՀՀ Կառավարության կողմից տնտեսական քաղաքականությունը կարող է իրականություն դարձնել և գեներացնել այն հնարավորությունները, որոնք առկա են ՓՄՁ ոլորտում:

ՓՄՁ ոլորտում ***առկա առավել էական հիմնախնդիրներն*** են.

➢ գերփոքր տնտեսավարողների խիստ զգալի մասնաբաժինը՝ ՓՄՁ տնտեսական գործունեությունը բնութագրող գրեթե բոլոր ցուցանիշների շրջանակում և հատկապես փոքր ու միջին տնտեսավարողների անհամեմատ պասսիվ վարքագիծը,

➢ ՓՄՁ տնտեսական գործունեության արդյունքների գեներացման դանդաղ ընթացքը,

➢ ՓՄՁ-ների կենսապարբերաշրջանի կարճատև տևողությունը, նոր ստեղծված և գործունեությունը դադարեցրած/լուծարված (մահացած) ձեռնարկությունների ընդհանուր քանակների միջև աննշան տարբերությունը, ինչը վկայում է ՓՄՁ տնտեսավարողների իրավիճակային բիզնես մտածողության, գործարար դաշտի արդյունավետ և հեռանկարային զարգացման վերաբերյալ գիտելիքների պակասի մասին,

➢ ՓՄՁ գործունեությունն այնպիսի ոլորտներում, որոնք աշխատատար են, ոչ գիտատար, հետևաբար՝ նաև արտադրված ապրանքներն ու մատուցված ծառայությունները մրցունակ չեն:

Այնուամենայնիվ, ՓՄՁ ոլորտը, չնայած առկա հիմնախնդիրներին, կենսունակ է, ավելին, COVID-19 համավարակի բացասական ազդեցություններին կարողացավ դիմակայել, օժտված է վերականգնողական լուրջ վարքագծով և հետքովիդյան ժամանակահատվածում ցուցաբերում է վերադասավորումների ճկուն վարքագիծ: Հայաստանում սերնդեսերունդ ձևավորված ձեռնարկատիրության արժեհամակարգը՝ հայ մարդու պայքարելու, արարելու ջիղը, գործարար մտածողությունն ու ռիսկին դիմելու հատկանիշը, նաև այսօր ՀՀ կառավարության կողմից իրականացված հարկային, օրենսդրական բարեփոխումները, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը ձևավորում են նոր հնարավորություններ՝ հայաստանյան գործարար դաշտի, հատկապես ՓՄՁ ոլորտի հետագա առաջընթաց զարգացման համար:

Հնարավորություններն իրականություն դարձնելու համար ***առաջարկում ենք.***

❖ Հարկային, վարկային, օրենսդրական նախաձեռնությունների միջոցով բարենպաստ միջավայր ստեղծել հատկապես ՓՄՁ հետագա զարգացման համար:

❖ ՓՄՁ տնտեսավարողներին աջակցել՝ դիվերսիֆիկացնելու բիզնես-ժողովրդագրական միջավայրում իրենց գործունեությունը՝ ելնելով ՀՀ կառավարության կողմից սահմանված տնտեսական առաջնահերթություններից:

❖ Աջակցել մարզերում ՓՄՁ երկարաժամկետ գործունեությանը՝ հենվելով պետություն-մասնավոր հատված համագործակցության ակտիվացման վրա:

Հետայսու կազմակերպությունները պարտավոր են դրսևորվել ավելի մեծ ճկունությամբ և մշտապես պատրաստ լինել «սև կարապներ»-ի այցելությանը: Իրավիճակային որոշումներն արդեն ժամանակավրեպ են, կենսական անհրաժեշտություն է երկարաժամկետ, գիտականորեն հիմնավորված, համակարգային լուծումներով տնտեսական քաղաքականության մշակումը և դրա իրագործմանն ուղղված միջոցառումների առաջնահերթությունների կենսագործումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց, Հայաստան,Հայաստանի ազգային զեկույց, 2019/2020,Ամերիա ՓԲԸ, 2020,GEM-ArmenianFinal.pdf (ameriaadvisory.am).
2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի Նախարարություն, https://www.mineconomy.am/.
3. ՀՀ ՎԿ (ԱՐՄՍՏԱՏ), Հրապարակումներ, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում, 2021թ., SME _Bul_2021_arm. (armstat.am).
4. ՀՀ ՎԿ (ԱՐՄՍՏԱՏ), Հրապարակումներ, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում, 2020թ., https://armstat.am/file/article/sme__bul_2020_arm.pdf .
5. ՀՀ ՎԿ (ԱՐՄՍՏԱՏ), Հրապարակումներ, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում, 2019թ https://armstat.am/file/article/sme__bul_2019_arm_2019.pdf.

6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-նոյեմբերին / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am).

ДЖ.А. ТАДЕВОСЯН

ТЕКУЩЕЕ СОСТОЯНИЕ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

Малое и среднее предпринимательство (МСП) - один из важнейших факторов повышения конкурентоспособности экономики Армении, обеспечения инклюзивности и устойчивого развития. В последние годы система ценностей предпринимательства, несмотря на некоторое влияние, продолжает играть серьезную роль в экономической жизни страны в форме МСП. Поэтому выявление проблем в сфере МСП и комплекс мер, направленных на их решение, будут способствовать не только экономическому росту страны, но и решению некоторых проблем в социальной сфере, в частности, снижению безработицы, уровня бедности, предложению новых рабочих мест.

Ключевые слова: микро-, малые и средние организации, система стоимости бизнеса, валовой внутренний продукт.

J.A. TADEVOSYAN

CURRENT SITUATION AND DEVELOPMENT OPPORTUNITIES OF SMALL AND MEDIUM BUSINESS

Small and medium entrepreneurship is one of the most important factors of increasing the competitiveness of the Armenian economy, ensuring inclusiveness and sustainable development. In recent years, the value system of entrepreneurship, despite some influences, continues to play a serious role in the economic life of the country in the form of SMEs. Therefore, the identification of problems in the SME sector and the package of measures aimed at solving them will not only contribute to the economic growth of the country, but also to the solution of some problems related to the social sphere, in particular, the reduction of unemployment, the reduction of the poverty level, the offer of new jobs, etc.

Keywords: micro, small and medium organizations, business value system, GDP.